

Ա. ՏԻՄՈԽԻՆ



Խեժա

III հա.

# ԿԳԻՏ- ԿԱԳՈՆ

891.71  
Հ - 78

1931 ՅԵՐԵՎԱՆ

ՄԱՐԻԵՏԱՆ. ՇԱՀԻՆՅԱՆ

22 JUN 2007

891.4

L-18

ար

# ԱԳԻՏ-ՎԱԳՈՆ

(ԹԱՐԴԱՐ. ԱՌԵՍԵՐԵՆԻՑ)

1926  
1926

1904  
30618

Պ Ե Տ Հ Պ Ա Տ

1931

Ց Ա Ր Ե Վ Ա Խ Ա

Գետիքատի տպարտում  
Գլուխ, № 6540 (р)  
Հրատ. № 1689  
Պատ., № 3263  
Տիր. 5.000



## 1.

Նա յերեվաց մեղ մոտ... սպասիր, թող մի  
հիշեմ... Համերգ ելինք կազմակերպում հունիսի  
հինգին, կազմակերի հարձակման ժամանակ, և  
կը կնեցինք այդ համերգը տասին՝ արդեն կար-  
միլների որով։ Դրան ավելացը եք յերկու շաբաթ  
և... ճիշտ վոր՝ որն որին։ Նա յերեվաց մեղ  
մոտ հունիսի քսան յերկուսին առավոտայն ժամը  
տասին, — դրան դուք կարող եք հավատացած լի-  
նել ինչպես ձեր սեփական ծննդյան որվան։

Պատմովը պահ մի ընդհատեց զբույցը բա-  
ժակը լցնելու համար, վորի տակին մզած լիմոնի  
կառը եր յերեվում, այնուհետև կծելով մի խոշոր  
կտոր բոքոն հաց, վորի մեջ շաղ տրված տուող  
շամիչները ճանձերի ելին նմանում, նա, տանց  
շատապելու կուլ տվեց տաք թեկը...

Ամառ եր։ Պատուհաններն աջից — ձախից  
բաց ելին։ Պատուհանների մեջ խաղացող քանուց  
տաքացած սոեափի և քաղցր տուփուլտի հոտ եր  
բուրում։ Թնացքը սլանում եր զեսի հաբավ։

— Քաղաքացի, անուհետեւ ինչ պատահեց:  
Նիհար, շոգից և թելից քրանած պատմողին  
շշապատել եր հետաքրքրվողների մի խումբ,  
քաղկացած՝ զեղջուկներից, մի կարմիր բանա-  
կայինից, լերկու լրապավոր կանացից ու թխա-  
ղնմ, առևտրականի նմանող լերկաթուղայիննե-  
րից դրանք հիացած հառել ելին իրենց հարցը-  
ները պատմողի բերնին:

— Շատպերու կարիք չկա, — ծանրաբարո-  
ւիկատեց պատմողն անհամբեր լսողին, — պատ-  
մութիւնը մոնպասու պես մի բան ե՝ հիմարը  
դո ծամում ե, իսկ խելքը գլխին մարդը պահում ե  
լեզի վրա ու կտնաց — կամաց ծծում: Ահա դա  
լերեկաց մեզ մոտ հունիսի քսան լերկուսին առա-  
վասարն ժամբ տասին:

— Քաղաքացի, մի բացատրիք տեմնենք եփ նկ  
լերեկաց, — հարցը համբերությունից գուրս լե-  
կուծ գանդիանիք մի պատահի լերկաթուղային:

— Յերիտասարդ, վոր դու մի մազաչափ համ-  
րերելիք՝ ծուռը հարց չելիք տալ — վոչ թե «ով»,  
ուղ «ինչ»... վորովհետեւ լես մի անսովոր փա-  
կնի մասին եմ պատ նում: Բայց նախ և առաջ,  
թույ տվեք ձեզ ասել, վոր ձեր առաջ գանգում ե  
նազգութայ — Պեշուրինի խմբից մի նշանավոր  
զերասան, վորը քսան ութ տարի շարունակ աշ-  
խացում ե բեմի վրա: Իսկական ասած լես նա-

յեվ յերգիչ եմ, սակայն, պահանջի համեմատ,  
ստիպված եմ պարապել և գերասանությամբ, և  
ոեֆիսյորությամբ, իսկ վերջին հինգ տարին քա-  
զաքական կյանքի աշխուժացման շնորիվ, կուպ-  
լիետիստի գերում եցի: Պատահում եր, վոր այս  
կամ այն կառավարության ձեզի մասին յերգած  
կուպլետս բերնից բերան եր տարածվում քաղա-  
քում...

— Այսպես, ուրեմն, հունիսի քսան լերկուսին  
հեղաշրջումից հետո, վաղ առավոտան վազում  
են մոտս մեր բակի լերեխաները և բարձրածան  
գոչում: «քեռի, քեռի, հետեվիցդ զինվորներ են  
լեկել», Դուրս լեկա վոնց վոր կալի — տեսնեմ  
շեմքին յերկու հրացանավոր կարմիր բանակա-  
յիններ: «Ընկեր, — ասում են, — մեզ զիտակից  
ուժեր են պետք գյուղական խավարի դեմ կըռ-  
վելու համար, թոռոցիկ միտիսդ ենք սարքում հա-  
տուկ վագնուում: մեզ պատմել են, վոր դուք լավ  
կուպլետներ եք ասում, դրա համար ել լեկել ենք  
գործկոմի կողմից: Թելեվ թուղթ չունենք ձեռ-  
քերիս, բայց ներկայանալը պարտադիր ե»:

Յես գդակս առա ու գուրս լեկա: Գործկոմը  
գտնվում եր նախկին քաղաքային ուսպրավալի  
շենքում, հրապարակի վրա, քաղաքային այգու  
գիմացը: Յեկա և ինչ տեսն եմ. մուտքի առաջ  
անիվների վրա կանգնած ե մի ահագին վագն՝

լծված շորս ձիով։ Վագոնը կարմիր եր ներկված ճիշտ այնպես, ինչպես առաջվա ժամանակները շըջող թատրոններն եյին ներկուում։ Յերկու կողմերից փոքրիկ պատուհաններ՝ վարպագուրներով իսկ պատուհանների մեջտեղը դեղին դուիներով զրված զանազան ագիտացիոն կոչեր ու լոգունդներ։ Յեվ այս բոլորը արված ե մաքուր, սիրուն, վարպետորեն։ Վոր կողմը նայում ես՝ ազդվում ես։ Առանձնապես լավ եր հետեւ կողմի նկարը — բանվորը ծանր մուրճը հին աշխարհի վրա բարձրացրած՝ կանչում եր դեպի ապագան, վորը հինգ թեվանի վարպատն ասողի նման փայլում եր նրա վերեր, Յեվ նա այնպես վարակիչ եր կանչում, վոր առանց վագեորության չեր կարելի նայել։ Վագոնի չորս կողմը բազմաթիվ յերեխաններ ելին հավաքվել, ով անցնում եր հրապարակից՝ և կանգնում նայում եր։

— Բարձրանում եմ սանդուղքներով գործկոմ և տեսնեմ առաջս և յեխում ֆրենչը և ատարձանակը կողքին մի յերիտասարդ։ Սա ներկայանում ե վորպես քարտուղար և տառե։

— Դուք մեր քաղաքի կուպլետիստ այս ինչ քաղաքցին եք…

— Այն, — պատասխանում եմ։

— Ահա թե ինչ։ Դուք հանձն կառնեք մեր թռուցիկ միտինգում կուպլետիստ ասեր նկութը

մենք կանխորեն ձեզ կմատնանշենք, իսկ պայմանները դուք ինքներդ նշանակեցեք։ Վագոնը մեկնում ե շըջակա գյուղերը և առաջին հերթին կազմակերի Մոլչանովկա ստանիցան։

Յես մի յերկու բոպե մտածելուց հետո համաձայնեցի, կամենում ելի տուն վերադառնալ, բայց քարտուղարն ինձ կանգնեցրեց։

— Վոչ, ընկեր չեք հասնիլ Յեթե վորկե մեկին ձեր տնեցիներից պետք ե զգուշացնել՝ տուն ուղարկեցեք, վորովհետեւ ժամը տասին ալսուել պետք ե ժողովվեն միտինգին մասնակցողները և մենք պետք ե մեկնենք…

— Թել, — ասում եմ, չեմ խմել։ — Ճանապարհին կամացնենք։ — Այս ինչ հարվածալին աճապարանիք ե, տուն եմ նա ինձ պատմում ե, թե իրենց մոտ ամեն ինչ վագուց պատրաստված, չափած-ձեշտծ ե, բայց դիշերը հիվանդացել ե խմբի լերդչունին, և վորովիել ե քաղաքում ապրողներից վօրեկ մեկով նրան փոխարինել։ Իսկ այսահել նրանց մի մասին այնքանելին պատմել, վոր նրանք վորոշում են իրենց հետ մնապատճառ կուպլետիստ տանել։ Արդպիսով ինձ մերս եր մոտերքից քառորդ փունտ ծխախոտ գնել և սպասել վագոնի շարժվելուն կես ժամից իմ ուղեկիցներն սկսեցին հավաքվել։ Հեռվից դիտելով՝ տեսնում եմ, վոր դրանցից շա-

տերն իրար չեն ճանաչում։ Մի քանիսը ծանոթ են թեթեվակի, մյուսներն առաջին անգամ են իրար տեսնում։ Առաջին մատեցողը բարձրահասակ տղամարդ եր, հազած ուներ պարուսինի զգիստ, լայն վարախկով, մեջքին կաշվե զոտի, դեմքով մերոնցից չեր—պարզեց, վոր վրացի յե։ Նա և մյուսը, կապույտ բլուզավոր նիհարը, կուսակցականներ ելին, մանդատ ունելին կուսկոմից։ Նրանք լուս բարեվեցին և մտան վագոն։ Ինչպես յես հետագայում իմացա, կապույտ բլուզավորը մեծավորներից եր, նա գործուղվել եր մեր կողմերը դորքի հետ, իսկ վրացին՝ տեղական աշխատավոր եր, մինչև հեղաշրջումը բան տումն եր յեղել։ Դրանց հետեւից յեկան՝ մեքենագրուհին—համակրելի արտաքինով և ջանել մի աղջիկ, հինգ յերաժիշտներ ու գործկոմի քարտուղարը։ Առաջի նստարանին բազմեց հրացանավոր կազակը, ձեռքն առավ սանձափոկերը ու քշեց ձիերը։ Փողոցում պատահողներն աչքերը չուծ նայում ելին մեզ։

## 2.

Վագոնն առաջին հայացքից ընթերցարան եր հիշեցնում, մաքուր կահավորված, պատերին՝ նկարներ, քարտեզներ և պլակատներ, իսկ մեջտեղը, սեղանի վրա, բազմաթիվ բըռցուըներ

և գրքեր քսան—յերեսուն որինակ ամեն մեկից։ այսակեղ կալին արկղների մեջ նաև թերթիկներ ու լրագրներ։


Ճամբար ընկնելով՝ նախաճաշեցինք ու սկսեցինք ծխել։ պատուհանների վարագույրները ծածկվում ելին առաջաստների պես։ Յերբ մենք դուրս յեկանք գաղաքից զուրս՝ պատուհաններից ներս թափանձեց ստեղի բուրմունքը։ Սմառը մեր կուրանի ստեղներում լավ եւ խորը մինչև գոտիս և համուռմ, հայացքդ չի կարողանում ընդգրկել շրջապատի հակա տարածությունը, ճանապարհը ծփող վետրախոտի ալիքների մեջ չի յերեսում, աչքի չեն ընկնում վոչ մարդիկ, վոչ կենդանիներ, և այսպես վոչ թե մի կամ յերկու, այլ տասնյակ կիլոմետրներ։ Ստանիցաներ չեն յերեսում, իսկ մի ագարակից մինչև մյուսը ճայնդ չի համնի։ Իմ ուղեկիցները ինչպես յերեսում եր, վաղուց եւ քաղաքից դուրս չելին յեկել։ Մեր կապույտ բլուզավոր նիհար ուղեկիցը՝ նայեց պատուհանից, հանեց քթից պենսնեն և հայացքը քցեց մեղ վրա՝ նրա գեմքն իսկուն այլ արտահատություն ստացավ։ Մեքենագրուհին ախնօան եր թրվում, վոր ցանկացավ անպայման վոտաբորիկ վազել ֆուրգունի յետեվից, իսկ վրացին վագոն մանելու պես ոծիքը քակեց, նստեց նստարանին, վոտքը դրեց մյուսին ու սկսեց

իրար հետեւից մի որինակ վրացական յերգեր յերգել Յերածիշաները փորձում եյին նրան ձայնակցել փողալին գործիքներով:

Խոսակցությունը մեզ մոտ սկզբում պատխան գալիս: Յես ու քարտուղարը համաձայնության յեկանք կուպլետների նկատմամբ, յես անմիջապես զրի առա մի քանի կուպլետներ, կարգացի նրան և հավանությունն ստացա...

Շոքը մեզ խաշում եր, ստեղի գաղջ բուրմունքից դժվարանում ելինք չնշեր: Հանեցինք Փրենչներս, կոշիկներս... Բոլորիս գեճքը շիկացել եր: Որիորդն այնքան եր տրբել իր մեջքն ու թիերը, վոր նրանք ծածկվել եյին բծերով: Մենք գուրս յեկանք մեծ ճանապարհից և կանգ առանք հանգըտանալու արև հաշվով, վորպեսզի յերեկոյան հասնենք Մոլչանովկա ստանիցան: Արել մալր եր մտնում, յերբ հեռվից լսվեցին հրացանի հաճախակի տրաքտրաքոցներ: Զիերը կանգ առան: Կաղակը իջավ իր տեղից և մոտեցավ արև պատուհանին, վորից նայում եր նիհար կապույտ բլուզավորը:

— Կարծում ե՞ն լավ կլինի հետ դառանք:  
— Ի՞նչ ե պատահել, հրացանի ձախները  
Մոլչանովկավից են լսվում:  
— Այս, ել ուրիշ տեղ չկա, յես ես կողմելը լավ եմ. ճանաչում, աստված չանի արա-



տեղ մնանք, ծուղակի մեջ կընկնենք, մեզ չորս  
կողմից կըրջապատեն: Ինչպես յերեռւմ ե, սպի-  
տակները հետ են վերցրել Մոլշանովկան:

— Չի կարող պատահել, առավոտյան մենք  
վոչինչ չլսեցինք, այս վայրերը մինչև Տիխորեց-  
կաբան մարդված ելին:

Ամեն բան կարող ե պատահել վորի  
մասին առաջուց չես լսել, — նկատեց կազակը,  
բռնելով ձիու սանձից, վորպեսզի յետ դարձնի  
վագոնը:

Մեզ այս բան մեծ տհաճությունը պատճա-  
ռեց. այս ինչ հիմար զրություն ե. հարսանի-  
քավորների պես պճնված դնում ենք մեզ հա-  
մար ագիութագնոսվ, իսկ արտեղ, յերբ ար-  
դեն համելու վրա լինք, ուզում են յետ դարձ-  
նել մեզ: Մենք նայեցինք իրար յերեսին—ամեն  
մեկիս հայացքում նույն միտքը կարելի յեր կար-  
դալ:

Ե՛լ լսեցե՞ք, — կանչեց կազակին վրացին  
պատուհանից, — լավ չե՞լինի արդուք, վոր գի-  
շերը մենք մնանք այսահեղ, իսկ առավոտյան հե-  
տախուզենք. կարող ե պատահել սպիտակները  
լուսագեմին կապարպեն Մոլշանովկան և մենք  
կկարողանանք այստեղ մտնել:

Կազակը կասկածանքով շարժեց գլուխը:  
Նա հուսալի կարմիր բանակալիններից եր, ծըն-

վել եր արդ շրջանի փոքր ստանիցաներից մեկում:  
Դըանից մի քիչ առաջ նա կովի յեր բանվել իր  
հարազատ հոր հետ, վորը մորթել եր իր կրտսեր  
բալշելիկ վորդուն: Նա գիտեր, վոր այս բլրա  
պատ ստեպներում, ուր հողի ամեն մի թիվն  
ուսումնասիրված ե անցած զորքերի կողմից, ուր  
փոսերում զեռ կարելի յե վիրավարներ գտնել  
իսկ մացառներում բանդիաներ են թափնաքած,  
— նարագոր ե հանդիպել սպիտակներին և դա  
եժան չի նստիլ: Կազակը մարակի ծալրով փո-  
րելով հողը, դժկամությամբ պատասխանեց.


— Այս տեղերի ագստակների բնակիչ-  
ների ուես արնախում մարդկի չեք գանիլ ամ-  
բողջ կուբանում: Վայ նրանց ձեւոքն ընկնողնե-  
րին, տեղն ու տեղը կմորթեն: Ասում են, վոր  
Մոլշանովկայի կանայք կարմիր բանակալիննե-  
րին խեղղել են բազնիքներում: այս տեղ կազմի  
չի մնացել—Վրանգելը բոլորին քշել, տարել և  
իր հետ. մնացելեն միայն ծերերը ու մանուկները.

— Տեսնում եք, ընկերներ, — շարունակեց  
իր խրիտա ձախով վրացին, — բացի կանանցից,  
վոչ վոր չի մնացել, իսկ դուք լերկլուղ եք կրու-  
քշել Մոլշանովկա: Կանանց մենք ախտես կհա-  
մոզենք, վոր նրանք իրենց ամուսիններին ել  
տուն չեն թողնիլ: Սրծակեցեք ձիերը, մինչեւ  
լույս կապասենք, այստեղ ի դեպ, չոփի յել էա  
կրակի համար:

Մենք կանգնած ելինք փոքրիկ զայտիվալը  
ձորակի մոտ, վորը մեր կողմից մերկ եր, իսկ  
հակառակ կողմից ծածկված եր թվերով։ Տրաք-  
արաքոյները դադարեցին Անհամեմատ դուրեկան  
եր խարուցկ վառել, զիշերն անցնել որհնիված  
ստեպում, քան վերադառնալ։ Մեքենսպրուժն  
ցատկեց վագնից գետին և թեթև խփեց կազա  
կի մեջըեն։

— Ինչից եք յերկուող կրում. մի տեսք  
շուրջ բոլորը—համն անգամ չի վախենալ։  
Կազմին անուամենանիվ դժկամությամբ  
և ըստ յերեռւթին բորկությամբ, արձակեց  
ձիերը, կապանը գրեց նրանց վոտքերին և բաց  
թողեց արածելու։ Անուհետեւ նա գնաց  
աղբյուրը, չոփի հավաքեց և մենք, ուրախացած,  
սկսեցինք խարուցկ վառել ձօրի խորքում, վոր-  
ուեսզի դա աչքի շընկնի։ Վագնիր վերջալույի  
ճառագայթների տակ փայլին եր տալիս, Նրա  
վրայի լոգունգներն ու պլակատները վառվում  
ելին կրակի պես։ Հավանական ե վագնը հովից  
աչքի յեր ընկնում։ Այս րանը ևս դւր չեկավ  
մեր կարմիր բանակայինին։ Նա իր նստարանի  
տակից հանեց մի զզզզված ձիլուկ և դրա-  
տակից հանեց մի զզզզված ձիլուկ և դրա-

Խարուցկի շուրջ մենք լավ ծանոթացանք  
իրար։ Նման դեպքերում խոշոր նշանակություն



ունի հարմարություն ստեղծելը։ Սովորաբար դա կահացի գործ է, առկան մեր միջի միակ կինն այն երակներից եր, վորոնք բացի իրենց աշխատանքից վոչինչ չդիտեն. նա վաղվզում եր, հարցեր եր ուղղում պրան-նրան, ծաղիկներից սրբիներ եր հյուսում և զնում մեր զլախն ու ծալայում անկարգությունը. Գործի գլուխն անցան վրացին և հինգ իբրաժիշտներից մեկը պերջինը մեզ համար աւղուր յեփեց ու սուրճ պատրաստեց, և այս բոլորը նա անում եր կառակելով և քթի տակին ձրմալով Վըացին ել եր վարպետորեն շարժվում, բայց նա կատակել չդիտեր, նրա արտաքինը վախեցնում եր՝ զեմքը իրիս եր, ծաղկահար, քթը ծուռ յերեսում եր, ջարդվիլ ու հետո կպել եր, ձեռքերը մեծ, բայց մեւակը անձոռնի։

Կապոյաց ըլուզավորն առաջին պահ իրեն վոչինչով շարտահայտեց, նա նոր եր չեկել Մոռկատից մեր կողմերը։ Նու ժողար յերկշոտ եր և թուց, ինչը՝ վախտ, թուլակագմ. Մեզանից վոչ վաք չգիտեր այդ մարդու վոչ ուժը, վոչ մեծությունը, դա մենք միՓիչ հետ խմացանք։ Իսկ մինչեւ այդ նա լուս եր, կատակներին հաղիկ եր ժամանմ. ուտում եր ցրված և քիչ բացարկելով, թե յերկու տարբատ մննդագույից հետո խռոսափում ե լիտառա ուտելուց, Յեթե մեր

իերիտասարդ քարառվարի դեպի նա տածած հարգանքը չիներ, մենք խաղաղ մոռացության կմատնելինք արդ վախտ մարդուկին և նրա հետ միասին բոլոր տեսակի քաղաքական խողիրները։

Յեվ ալսպես նստած կրակի շուրջը՝ չելինք ուզում քնել. Վոչ վոք չեր կամենում թարմ ողի թողնել ու ֆուրգոն խցկվել. Տրաքարաքոցի դադարելուց հետո կազակը ևս մի քիչ հանգստացավ, հանեց ծխախոտի տապրաւը, զլանակ փաթաթեց և նստեց կրակի մոտ։

— Ասացեք, ընկեր, դուք ինչպիսի ունկինդիրների նկատի ունեք հանգիպել Մոռչանովկայում, — հարցրեց վրացին նիհար մարդուն. — Աչքի առաջ առեք՝ կազակները նենգ մարդեկ են, նրանց զժվար և պերճախոսությամբ նվաճել. Նևանք որորոցից սովոր են պերճախոսության։

— Ինչ վոր ճիշտ ե — ճիշտ ե, — մեջ մատվ կազակը, ճառել նրանք գիտեն. կազակի ճառը տերաերի ճառից թանձր ե. խոսքով դուք նրանց զլիսից չեք հանի.

— Ազիտացիա մղելիս, խոսքերի վրա չպետք ե հենվել, — պատասխանեց նիհարը, — պետք ե ճանկես ու հրապուրես, խսկ այդ կարելի յեզուիս բերել ամեն անգամ նոր միջոցներով. Մարդկանց խելքի բերելու համար յերկար ու բարակ գլուխ չպետք ե ցավացնես, խսկ տվել

դեպքում գու պետք և այնպես վարվես, վոր  
նրանք ցանկանան քեզ հետ գալ միանգամից,  
առանց լերկար ու բարակ մտածելու, և լեթե  
դա քեզ հաջողվել ե—գործի սկիզբը դրված  
կարող ես համարել

— Յես, վորպես ագիոսատոր, մէշտ ձգաւում  
եմ ազգել մարդկանց զիտակցության վրա,—  
առարկեց վրացին. — յես լերեք աչքաթող չեմ  
անում հիմնական նպատակը՝ գուրս վանել իստ-  
վարը գլուխներից, համոզել ակներեվ փառակըով,  
ի հարկե մուժիկի հետ իս կատակներ ո ծամա-  
ծություններ եմ անում—մուժիկի վերարերալ  
այլ մոտեցում պետք ե ցուցաբերել, քան բան  
վորի, սակայն նպատակը միւնունն ե— համո-  
զել, զարթեցնել դատողությունը և այն ասաի.  
Ճանի բերել, վոր նոտ զիտակցաբար յերկընտրանք  
կատարի:

Սլդ բոլորն ալդպես ե, սակայն գու աղի-  
տացիա չե՞՞՞ Տարբեր խնդիրներն իրար հետ չպետք է  
շփոթել. Պրոպագանդի համար ձեր արամագըության  
տակ կա ժամանակ, գրականության Ազիտացիա  
մղելիս այդ միջացներից գուք գուրկ եք— գրանց  
կարիքը չի ել զգացվում. գուք այստեղ կալծակի  
պե՞ռք ե լերեվաք ու վասեր:

Զըսւցի ընթացքում նիհարն ամրողջովին  
կինդանացավ, նրա գնմագծերը ուուր արտահայ-

տություն ստացան, ձախն ուժեղացավ: Մենք  
բոլորս մտածեցինք, թե նա արտասովոր հեռուոր  
պետք ե լինի: Սակայն վրացին չեր ուզում դա-  
պարել. նա մի կես ժամ ել վիճեց ու գնաց քնի-  
գարել. Նիւար ազիտատորի ճաման իմ վրա մեծ ազ-  
լու: Նիւար ազիտատորի ճաման իմ վրա մեծ ազ-  
լու: Վեցություն գործեց: Յես, վորպես կուպիտիստ,  
հաճախ ելի շիում ունենում ամբոխի հետ և իմ  
նպատակն եր՝ վոգեորել ամբոխը:

Արդ մտքերով տարված ու անցյալիս մեջ  
ընկամված՝ շուտով յես ել գնացի ընելու: Որի որ-  
դին մենք տեղափորեցինք շիրմի հետեր, իսկ ին-  
քներս առանց հանվելու, մեկնվեցինք  
նստարանների վրա: Պատուհաններից խոշոր վար-  
վառուն աստղեր ելին լերեվում: Չորից խոնավ  
քամի լեր փչում: Մեր ձիերը, գուրս գալով  
թփուններից, շարժվում ելին վագոնի մոտ, նրանք  
ջանում ելին ազատել վատքերը կապանքներից և  
ցնցում գլուխները, վորից գետնի վրա ահապին  
ստվերներ ելին թոշշոտում: Կառապանը քնելու  
միտք չուներ: Յափնջու մեջ վաթաթված ու հրա-  
ցանը ձեռն առած, նա, ձորի լեզրին ժամանակ  
առ ժամանակ պապիրոս վաթաթելով՝ առաջ ու  
լետ եր քայլում:

Յես լերկար ժամանակ կողից կող ելի շուռ  
գալիս, հետո թարմ ողն ինձ հաղթեց և յես քնեցի:

Հանկարծ, քնիս խոր ժամանակը, կարծես  
մեկը բռունցքով խփում ե ականջիս՝ մեկ, յերկու,  
յերեք, չորս... Գժվածի պես վեր թռաւ: Բանից  
պարզվեց, վոր դա հրացանների արաքտրաքոցներն  
են ականջիս հասել: Այն ել ինչ տրաքտրաքոցներ:  
Չես հասկանում վճրաեղից ե, վար կողմից: Իմ  
շորս բոլորը վազգում ելին զարթնած յերաժիշ-  
տները, նրանք վախենում ելին դուրս ցատկել  
վազոնից, նայել պատուհանից:

Եես, սակայն, հետ քաշեցի վար, գուլը և  
ինչ տեսնեմ՝ պատի մոտ զնդակներից մեր ձին  
ծառս յեղած կանգ ած ե: Այդ դիրքում նա տհ-  
ուելի յեր թվում: Զիու յետեր, նրա քաշեց բռ-  
նած, կազակը կրակում եր, թիշ հեռու գետնին  
ընկած եր մյուս ձին, վորն սպանված եր: Իսկ  
շորս կողմից, այլից ձախից, ձորի միջից գեղի  
մեզ ելին զուռում դեմի պես ահոելի բրդոտ  
ետկներ, վորոնք մթնշաղի մեջ ուրվականների  
ելին նմանվում: Նրանք անդադրում կրակում  
ելին:

Նրանց մի քիչ զսպում ելին մեր վիրավոր ձիու  
հետև թագնված կառապանի շեշտակի զնդակները:  
Բայց ահա զնդակը կպակ ձիու փորին: Զին  
ծանր շնչելով՝ ցնցվեց, ամբողջ յերկարությամբ

մարդու պես ձգվեց և լերկու առաջի վատքերով  
ճզմեց կազակին, վիւվելով նրա հետ միասին  
գետնին: Յես լսեցի կազակի վասկորների շընխ-  
կոցը: Այսուհետեւ գնդակները կարկախի պես սկը-  
սեցին ծեծել վազնի պատերը: Յւս գեռ աշքի  
ելի լիկել, յերբ ինչ վոր մի ձեռք բանեց ոճի-  
քից և հետ քաշոց ինձ պատուհանից:

Պառկեցեք գետնին՝ դոչեց խոպոտ ձւյ-  
նով վրացին, — լնկերներ, ով գենք ունի՝ դռան  
մոտ:

Պարզվեց վոր միայն նա զենք ունի:  
Վրացին հանեց գոտուց ասրճանակը և իբին  
նետեց գեղի դուռը:

Յերաժիշտները սարսափած՝ կուչ ելին յե-  
կել հատակին: Նրանցից մեկը մտել եր նստա-  
րանի տակը: Մեքենագրուհին միայն մի շապկով,  
կտավի պես գունատ, կանգնել եր պատի մոտ  
ու սեղմել ականջները ձեռքերով: Նա ձախն չեր  
հանում, այլ անընդհատ ինչ վոր բան եր լմլմում:  
Դրեթե անզգա հայացքս դարձնելով՝ սենյակում  
լիս հանդիպեցի ևս մի գույզ աշքերի, վորօնց ան-  
զորը թյունը սարսափեց ինձ: Դա նիհար բլու-  
զափորն եր: Նա նստել եր վագոնի անկյունում,  
ուր գտնվում ելին նրա պորտֆելն ու բարձը և  
անսովոր գործով եր զրազված—վասքերին եր  
քաշում յերկարավիզ կոշիկները: Նկատելով վր

լեռ հայացքս նրան եմ հառել բոլորովին հանգիստ ձախով նկատեց.

— Կազակն արդաշացի լեռ, մենք խելառ բան բռնեցինք: Մեզ վրա հարձակվել եւ սպիտակների հետախուզող ջոկատը, աշխատեցեք փրկվել՝ լեթե առաջի պահին վոյչ կմնաք: Ասացեք, վորդուք յերաժիշտներն ու որիորդը բռնությամբ մորիլիզացիայի եք լենթարկվել՝ միտինգին մասնակցելու:

Այդ բռուելին դուան մեջ ատրճանակից կրաշ, կող վրացին ընկափ: Մեքենազրությն հուսահատ, հիսոերիկ, արատառվոր ճիչ արձակեց.

— Փրկեցեք, փրկեցեք մի՛ ձեռ տաք:

Դուան մոտ համազարկ տվին և մեղ ձախեր հասան:

— Անձնատմար լեղեք,

Յերաժիշտներից մեկը վիրավորվել եր, մենք գոչեցինք.

— Անձնատմար ենք լինում: Մեր մեջ կին կա:

— Տվեք կամիսարին, — շարունակում ելին դրսից գուած—գուրս լեկեք մեկ-մեկ ձեռքերդ վեր կամիսարը թող առաջ անցնի:

Այն ժամանակ նիհար մարզը, մի ձեռքին պորտֆելը, մյուսին՝ զիմարկը, կարծես վոչինչ չեր պատահել—շարժվեց դեպի դուռը, և յես լսեցի

պարզ, հատու, իր հանգստությամբ զարմանալի ձախն:

— Ցես եմ կոմիսարը:

Տպավորությունն այնքան ուժեղ եր վորդու քարացրեց մեզ, մենք մի քանի վայրկյան մոռացությամբ տվինք վտանգը: Ավելին՝ մենք բռնուս, առնվազը իսա, այդ պահին մեզ կատարուուս, անվանագ վիճակում զգացինք: Ահա թե ինչ և նշանակում հերոսությունը, և դա չի կարելի հասկանալ առանց ապրելու:

Պահ մի լուսթյուն տիրեց: Նիհար մարդը կանգնած եր: Արեփ առաջին ճառագայթները դիպել լեին մեր վարչնի վերին՝ մսին՝ կարմիր պատմականից մեր վարչնի վերին՝ մսին՝ կարմիր ցոլք գցելով պորտֆելավորի քեմքին: Հանկարծ միանգամբց, կարծես անդունդի միջից, լովեցին տամնակ խռպոտ ձախեր՝

— Շնչու:

Զհուդ:

Ցցին հանեք նրան: Տղերք, ովե՞ք դրա գլուխն:

— Սատկացը ներք:

Այդ նույն վարկանին՝ ամերիխը հարձակվեց մեր կոմիսարի վրա, քաշեց նրան շեմքից և ցած գլորեց: Ցես լսեցի հրամանը.

— Ցես: Ժամանակից շուտ չսպանել: Հարցաքննել և ցցին համել:

Այսուհետև նույն բրդուաները (նրանք մեղ ալդպես ելին թվում, վորովհետև զլուխներին բարձր, բրդուա փափախներ ունեին, — դա կառա փորական բանակի անվանիք գնդերից մեկն եր) հարձակվեցին մեղ վրա, կապկապեցին և մեկ-մեկ դուրս քաշեցին վաղոնից:

Մեղ սկսեցին հարցաքններ: Այստեղ առաջ անցավ յերաժիշտաներից մեկը և աղիողորմ սկըսեց նեկեկաղ. Նրա ասելով, մեղ մորիլիզացիափ ելին թնթարկել մահվան սպառնալիքի տակ: Քաղաքի պիճակի մատին տրված հարցերին նա, առանց խղճի խալթոցի, պատամիսնեց՝ թե այստեղ խուճապի և տիրում և անհամբեր սպասում են սպիտակներին, վորպես փրկարարների: Մի խոսքով՝ չանցավ առ ար բոզե, և սպան նրան պապիրոսով հուրապնեց: Խուռովանվում եմ—այդ բոզեին նա նոզկանք առաջացրեց մեջս, մինչդեռ այդ մարդը փրկեց մեր կյանքը:

Մեղ ձերբակալեցին, սակայն ձեռք չտվին: Մինչդեռ մեղ հարցաքննում ելին, զինվորները դուշս քաշեցին վագոնից մեր իերիտասարդ քարտուղարի մարմինը. Նա սպանվել եղ գեռ առաջի, գնդակով, քնած ժամանակ:

Այսուհետև սկսվեց կոմիտարի հարցաքննությունը: Ավելի շուտ դա ծաղը ու ծոնակ եր, քան հարցաքննություն: Նրա լուսէց արդուն եր

ծորում: Վերին ատամները բերնում ջարդվել են: Պատասխանելիս՝ նա արդուն եր թքում: Սպայի հաբցին կոմիտարը պատասխանում եղ պարզ, կարձ, զրեթե ժպիտը յերեսին Կարճութեա աչքերը (ակնոցները պոկել չարդել ելին) նայում ելին արտասովոր հայացքով: Յերկում եր, վոր նա կարճատեսութիւն պատճառավ չի ջոկում վնչ վեճքերը, վնչ ուրիշի հայացքի ուղղությունը: Նա նայում եր, ու առաջն ինչ վոր մտ պոր միան իրեն տեսանելի կետի:

Տանջել, — գոռում ելին զինվորները, — ի՞նչ եր մտածում:

Նիհար մարդն ուզզվից, հոետորի պես բարձրացրեց ձեռքը և գոչեց պարզոնչուն ձայնով:

— Ընկերներ, մոտ ե ժամը, յերբ դուք կը հասկանաք ձեր արածը: Զեք տեսնում միթե, վոր կարմիր բանակը ձեզ, ձեր կանաց ու ձեր յերեխաների համար և կավում: Մտածեցեք — ում եք դուք պահպանում: Մտածեցեք — ուր ե ձեզ խոստացված հողը:

— Լոիր, շնոր, գոչեց սպան, — ցցի հանեք դրան:

Գլուխք, ինչ բան և ցիցը Դաւ մի յերկուր փայտ ե — ամենահասարակ վայս: Ահա սյդ տեսակ մի մտհակ խրում են մարզու հետեւ անցքը: Յես տեսա թե ինչպես նրան նստեցրին ցցի



վրա: Փայտն այնպիսի ուժով անցավ կոմիսարի ներսը, վոր նրա կտրտվող փորոտիքը ճրթճոթած: Այն ժամանակ, յերբ ցցին հանված մարդը կըծկում, ծրմովում եր, արևելքից լերիաց մեծ, վառ արևի ծլվլացին թոշունները, կենդանացավ ամբողջ ստեղը և վերևում շացուցիչ կերպով պսպղաց մեր տգիտ վագոնն իր բոլոր լոկունդներով և պղակատներով: Վագոնը մեր կողմն եր դարձված իր այն մասով, ուր ուրախ բանվորը հրե մուրճը բարձրացրած, կանչում եր դեպի փայլող հինգթեանի աստղը:

Ցցի վրա տանջվողը տեսավ այդ ասազն ու ձեռները պարզեց գեպի վագոնը: Յեվ... Յնցը վում եք մի չե ալժմ, յերբ մտաբերում եմ: Հանկարծ ուժեղ, վոչ մարդկալին ձախով, կարծես նրա փորոտիքը չեր կտրտվում, սկսեց խոսել: Դա նրա ազիտացիոն ճանն եր: Նա միայն կարողացավ ասել.

— Կեցե՛ Բանվորա-Գյուղացիական հանրապետությունը: Դուք բոլորդ կհասկանաք, դուք բոլորդ մեզ հետ եք: Վագոնում ձեզ համար պատրաստված ե գրա-կանություն: Վերցը եք վագոնը ձեզ:

«Վագոն» բառը մի տեսակ կտրեց դանակի պես—այնպիսի ուժգնությամբ ուռւս լեկտվ նրա կոկորդից: Տպավորությունը շշմեցուցիչ եր: Զին-




վորները մասին սառած, շատերը լեռ-լեռ քաշ-  
վեցին։ Սպան նզովով կրակեց այն մարդու լե-  
րեսին, վորն ագիտացիա լեր մղում ձողից։ Նա  
կատաղած գոռաց՝

— Այրել վագոնը։

Ալպաեղ յես մի չափազանց արտասովոր  
բան տեսա. զինվորները վրա տվին վագոնին,  
մտան ներսը և, — թող գետինն անցնեմ յեթե  
ստուժ եմ, — ձեանալով թե ջարդում են վագո-  
նը՝ սկսեցին կարկախ արագությամբ շորերի,  
կոշիկների, գլխարկների մեջ խցկել մեր գրա-  
կանությունը։ Յես պատռհանից տեսնում եմի  
նրանց տեսդային շարժումները։

Այս զեպքից չորս ամիս հետո ամբողջ հա-  
րավը վերջնականապես մաշրվեց սպիտակներից։  
Դիպվածով յես հ անդիպեցի մեր այն ժամանակ-  
գա փափախավորներից մեկին, նա արդեն կար-  
միր բանակալին եր դարձել։

— Գիտես, մենք բոլորս ել անցել ենք  
կարմիր Բանակի կողմը, — ասաց նա ի միջի այ-  
լոց. — են զբականությունը մեր սիրտը դաղեց։  
Են որվանից ել մտածմունքի մեջ ընկանք...



ՀՀ Ազգային գրադարան



NL0317808

438

12.404

ФРС 15 ЧПР

М.И.АГИМЯН  
АГИТЗАГОН  
ТИБЕССРА 1931 БРИДА



891.71  
—  
81-2